

Թէև մատենադարան Մայր Աթոռոյս ունի զբազում աւետարանս և զանազան յիշատակարան պատմականք, օսկայն և աւետարանս այս՝ որ զրեալ է ի ՉԽՆ թվին Հայոց ի Հայրապետութեան Ստեփաննոսի և ի Թազաւորութեան Արիկեցւոց Հեթմոյ որդւոյ Աւոնի, և յիշխանութեան մեծ սպարապետացն Պապաքի և Խաչոյ որդւոյ և Թոռին մեծին Պոռչայ՝ ժառանգացն ցեղին Խախբականց, մերձ է վեց հարիւր ամաց հնութեան. մանաւանդ տեսեալ ի նմին զանուանս Պոռչ և Պապաք, յուշ ածեալ իմ՝ զի արծաթեայ աման սուրբ և Եստուածամուկ Պեղարզեան Քրիստոսի որ ի Մայր Աթոռոս, յիշատակ զոլ կարծեմ Պոռչ իշխանի. և այլ անցք պատմականք որ յայս յիշատակարան, յորում ժամանակի պատահեալ ցուցանի և զրաւումն զղեկին Հռոմկլայու յԱզգիպտացւոց Թազաւորէն, զարթուցին ի մեզ իզձս օրինակելոյ և առաքելոյ կանխաւ առ Ձեզ, որ որպէս սովոր էք հրատարակել յԱրարատ ամսաթերթի զայսպիսի հնութիւնս, զուցէ և զայս հրատարակեսցէք ի ծանօթութիւն հասարաց և ի քաջակերութիւն նուիրողի աւետարանիս մեծապատիւ Պարոն Յովհաննէսի որդւոյ հանգուցեալ Յովհաննէս Ավտալ վարժապետի, ևս և յօրինակ այլոց ազգասիրաց առ ի նուիրել զայնպիսի հնութիւնս մատենադարանի Մայր Աթոռոյս. յորում անկորուստ մնան յիշատակք զարուց ի զարս:

Ի վերայ սպիտակ մարմարիոնեայ տապանաքարի հանգուցեալ Յովհաննէս Ավտալեանց զխնական վարժապետի զրեալ

է տապանազիր, զոր օրինակեալ է իմ ի բուն տապանաքարէ նորին, որ է օրինակ զայս:

Հանդիստ
 Ի տապանիս այսմիկ
 անիոսի մարմին գիտնական Պարոն
 Յովհաննու Ավղալեանց
 բազմամեայ վարժապետի Հայկեան
 Մարդասիրական Ծեմարանի,
 Որ վախճանեցաւ ի Կալկամայ յամի
 1870 Չուլայի 11 ի հասակի
 67 ամաց, 8 ամոց եւ 7 անուրց:

Չայր այսպիսի՝ որպիսի է Յովհաննէս Ավղալեանց վարժապետն՝ որ կէս զարուչափ վարժապետութիւն արարեալ է, չէ՛ արժան նյիշատակ թողուլ, և որպէս մեք յօժարութեամբ զրեցաք, յուսամք զի և հրատարակէ յԱրարատն՝ երբ և պատշաճ համարեսցի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Կ Տ Ա Կ

Գ Ր Թ Ա Կ Ա Ն .

Այլ է եղանակ ուսանելոյ, և այլ՝ եղանակ ուսուցանելոյ, վասն զի և նպատակք և օժանդակք երկոցունց են այլ և այլ, և այս՝ այնքան քաջայայտ է, զի չարժէ ինչ սորա աղազաւ երկար խօսիլն և մտածիլն անգամ: Աին յանդիման կերեւի՛ որ բազում ուսեալք կղտնուին, որ չեն տեսնազրեալ և հասու՝ ուսուցանելոյ եղանակին, վասն որոյ և նոցա աշխատութիւնքն բազում ուրիք, կամ լաւ ևս՝

ընդ ամենայն տեղիս՝ կմեան անպառուզ :
 Եւ այս իսկ է, ծայրահղոյն առ ի թն, որ աղ-
 զի մէջ զժուարութեամբ մուտ կգասնէ,
 հանրական ուսումն, յամբ կտարածուի
 ամբոխի մէջ, և մեծամեծ խոչ և խուժ
 կունենայ բազմութի մէջ տարբանալոյ
 համար :

Մյս՝ և մեր համազգային հրահանգու-
 թեան և բարոյական կրթութեան սատան
 հրեշտակն՝ միայն յուսալի է, թէ զոնէ ա-
 սուհակ մեզնէ մերժուի հեռանայ սը-
 բովբէական բոցեղէն սրով նորահաստատ
 ճեմարանի, և մեր զբնակներն ազատին
 նորա կուսիներն : Ազգայոյս հաստատու-
 թիւն այս՝ էր երբեմն՝ որ արդարեւ կարօտ
 էր բազմադիմի օժանդակութեանց, բայց
 փառք Ամենաբարձրելոյն, շնորհք նախա-
 խնամութեան և խնայտուն անօրէնու-
 թիւնք իմնադրին՝ Ազգասէր շայրապե-
 ակն՝ համախմբեցին նորա մէջ օր ըստ
 օրէ աւելի եռանդուն Ազգի համակրու-
 թիւնն, (Ազգի՛ որ իւր գանձն հանդանա-
 կելով անդ՝ իւր սիրան ևս զրեց հաստա-
 տուն նորա բարեբաստութեան և յառա-
 ջադիւմ՝ զարգացման տապանակի մէջ,) և
 վերջապէս պարգեւեցին այնպիսի Արա-
 տեսուչ, որոյ զիւտի ազազու պիտի բա-
 զում անգամ՝ նոր ի նորոյ վառեր իւր
 լապտերն հինն և մինն Վիողիւնէս :

Ենցեալ տարւոյ Աեպտեմբերի ամսա-
 տեարն Արարատից քաջ յայտնեց այն
 զիսնական Այցելուի փրօկրամայն, որ
 բաց ի կրօնադիտական ուսմունքն արժար-
 ձելոյ՝ ունի ձիզն դնել ոչ միայն շայոց
 լեզուն մաքրել և հասուցանել ջայն կա-
 տարկութիւն՝ յորում կգտնուէր յա-
 ւուրս Արջանկայիշատակ Թարգմանչաց

մերոց, կամ՝ յոր կգտանի հասեալ արդէն
 յերկոսին վանս Մխիթարեան Միաբա-
 նութեան, և յայլ տեղիս ոմանս ևս՝ մեր
 համակրօն համազգեաց մէջ, «այլ և ի
 «նոցին իսկ յԱւրօպականացն ազգաց
 «լեզուս քաջ ներհմտացեալք աշակեր-
 «տեալքն ճեմարանին, եկեացէ ժամա-
 «նակ, զի զմերոց ազգային աւանդից՝ զե-
 «կեղեցականաց և զքաղաքականաց, զբա-
 «տոյց նկարագիրս առաջի արտոցնն ի-
 «մասանոց նոցին, և ոչ ևս իշխեսցէ որ
 «ուրեք խրամատ իմն ճշմարտութեան ի
 «ստուգապատում՝ մատենագիրս մեր աբ-
 «կանել կամ՝ գտանել » և այլն :

Վանի՞ հրճունօք ընթերցաւ Ազգի
 մէջ այդ Վրուտա՞ թարգման ըզձի և խու-
 սեփանութեան ազգային խորհրդոյն. քա-
 նի՞ արատասուք ուրախութեան ճնշեցան
 յաչաց և ի սրտից Ազգասիրաց : Արդարեւ
 զաշախար ազնիւ և նոպատակ անտերիւք
 ազգասիրութեան, զոր յամենայն կեանս
 իւր՝ ի բանս և ի զործս մարմնացու-
 ցեալ է Վերապատիւ Տ. Վարրիէլ Ա.
 դերիմաստ Արքեպիսկոպոս Այվազեան,
 և այժմ՝ ի հռչակաւոր ձառի իւրում
 ի նաւակատիս Օրհնութեան տարեդար-
 ձի ճեմարանին՝ կրկին արար լսելի այն իւր
 մետուզփեան խորհրդոց արձագանքն :

Բայց և ինձ չարչարեալ ձերոյս ներես-
 ցի սակ համարձակ, թէ մինչ ճեմարա-
 նն գտանէր յայնմիկ ձեռամբածութեան,
 յորում առաջին աւուրք իւրոյ զարնա-
 նային արեւազարձի ծագեցան ընդ ազգե-
 ցութեամբ երկնաձեւ մոլորակաց և օղե-
 րեոյթ ասուրաց զիսաւորաց . . . ի
 մէջ լութեան տնջանաց բարեսէր Վը-
 րուտատղէն, կամ ի մէջ ազգապարծանք

նպատակաց նորին խրամատք խորք և վեհք մեծամեծք կերեւելին, զորս միայն կարէր կարկատել ձեռն իւր դարձեալ, յորժամ ինքն ըստ անխոնջ երկասիրութեան իւրում և անպայման Հայրենասիրութեան հոգւոյն յանձն առնոյր բաց ի վերատեսչութենէ լինել համանգամայն և վարժապետաց Վարժապետ, Ժամատեպատք կրթութիւնով ի վարժապետական պաշտօն գեթ զկրտսերազոյնսն հասակաւ ի վարժապետաց, յորոց ոչ սակաւք իցեն ի կարողութեան բիւրապատիկ առաւելութեամբ շահաբերութեան յօգուտ Ազգի, որ յոյս մեծունի յղացեալ ի սրաի իւրում յարգասիս ճեմարանին, և ի մխիթարութիւն թախճանօք կեցեալ և փաղաղեալ սրաի զորովազութ ձօրն Հասարակաց՝ Ահհափառ Հայրապետին, որոց քրտանց կայլակօք տոգորեալ են իւրաքանչիւր բուսնախիր կշիռ շաղախոյն, և արտօսբաժին կաթլովք ցօղոյ աղէխարշ արտասուաց մկրտեալ են մէն մի աղիւսք յորմն անդ պատուաստեալք, — զինիլ զինուորիլ ի պաշտպանութիւն կրօնի, ի պայծառութիւն լեզուի և զբականութեան նորայ, և ի հիմնարկութիւն հանդերձեալ բարգաւաճութեան բարերաստութեան Ազգին, և ոչ զենուլ զոհել զճշմարտութիւնն ի շնորհս սպաղարոշմ՝ առաից Մասիսաւանդ պատգամաց՝ հպատակեալ Միջնադարեան գաղափարի:

Չի՞նչ է վասն այնորիկ առատարուղի աղբերն զիտութեան՝ իբր ասիով միով ջուր կարկատելովն ծաբաւեաց՝ ժամ մի նուիրել յառանձին կրթութիւն վարժապետաց, նախ աւանդելով նոցա զկանոնս կանոնաւոր վարժապետութեան, յորս ին-

քըն բաղմամեայ նահատակութեամբ և զիալ է քաջափորձ, և ապա առաջի աչաց իւրոց տալով նոցա աւանդել զհամարն՝ զոր հանդերձեալ են վարդապետել ի գաստտան, և զննել՝ թէ արդեօք արդարեւ ըստ ճիշդ կանոնաց դաստիարակին, սապէս ինքեանք են դաստիարակեալ և դաստիարակին. և հուսկ ուրեմն՝ սապէս պսակ համակ ճիշտութեանց հիմնադրին և զորձակցաց նորին, ստեպ և անձանձիր թարթափելով ի սրբագրութիւնս շարագրութեանց, թէ աշակերտելոց և թէ վարժապետաց, որոց կարօտին բազում ուրեք բազումք յոյժ: Աւելն է այս քուրսըն փեթակօկիկական (°) ի շառաւիղս իւր, զորոյ պէտսն անշուշտ՝ այն ինչ են սկսեալ և սրարիբ աչք Աւրոպականաց նշմարել, և չեմք բարեբաստիկ՝ զի ժամանակակից եմք սկզբնաւորութեան նոցին: Համառօտեցից զբանս. ի ճեմարանին հանդերձեալ են ուսանիլ աշակերտք. այլ աստ պատրաստին դաստիարակել վարժապետք, միայն այսու պայմանաւ հանդերձ, զի այս դաստիարակութիւն դաստիարակաց իցէ կամ՝ ի զահլի սենեկաց Նորին բարձու Արբաղնութեան, յորս ինքըն բնակի, կամ՝ յառանձին ի մերձաւոր սենեկի ուրեք, միայն որոշ և մեկուսի յառարկայից աւանդելեաց ըստ ցուցակին, յառանձին ազատ ժամս պարապոյ՝ որովս զբօսանք հոգեկան:

Չի՞նչ ասեմ և վասն Հայրապետական Աթոռոյն ընդհանրութեան Ազգի արժանաւոր վարձատրութեամբ նիւթական և բարոյական արդասեաց շահիլ, զբաւել և ձգել զիղձ և սէր նորին առ բարգաւաճութիւն ճեմարանին, զի ոչ միայն ինքն

Հասցէ ի Հայրենասիրական նպատակ իւրոյ փրօկրամնայի, այլ և զՂեմարանն ժաման կացուցէ ի Հանդիպումն յուսոյն ի նպատակ իւր, առ որ ձգտին տարփանք Հայրենասէր Հիմնադրին, մինչ բազումը Հացալէցք ի տունս տունս Հօր մերոյ ըստ թուրքական և սխական արքունեաց Աղոսմանի արդէն ժաման առեալ ի նպատակ իւրեանց վայելին ի քաղցրութիւնս մեղու ի բջիջս անդ՝ իւրաքանչիւր ընդ որթով և ընդ ձիթենեաւ իւրով :

Չխաբոյ և Ազգն՝ որ պահպանէ այսքան Աթոռս, և Վանորայս և Ակեղեցիս և տաճարս և զայլ բազմադիմի Հաստատութիւնս ազգասիրականս, անտեղի ժխտութեամբ զլացի՝ յայսմ՝ Հեռէ զիւր սրտնուանդն նուէր այսմ առարկայի, մինչ բազում անգամ և ի բազում տեղիս առանց զգայակցութեան բանին սիրէ ի փայտս և ի վեմն զիւր շողշողուն քրտնալստտակ ոսկին՝ իրր ի շինութիւն վարժարանաց թափուր մնացելոց ի դաստիարակեալ վարժապետաց, գորով արդէն համոզեալ և խեղամուտ եղեալ, թէ այսուհետեւ միայն այդ Ղեմարանն է ապաւէն յոր և կթ կարէ ազատամտիլ՝ թէ Ազգն վայրավատին, թէ կրօնն նեղեալ, թէ լեզուն անկեալ ընդ պատուհասիրք երկնառաք բարկութեան աշտարակաշինութեան, և թէ ազգութիւնն առկայծեալ :

Օերունիս զառամեալ և կոշկոճեալ բեռամբք եօթանասուն և հնգից ամաց, որ միով ոտամբ կամ ի քուսցեալ վախազերեղմանի, յօժարեցայ զայս որպէս կտակ զնեւ ի թանգարան արդիւնարար Արա-

րատ ամնազրոյդ, և զուցէ թէ յայս իսկ յանգեացի վերջին բան շրթանց Օերունոյս

ԳՍԲԻԷԼԻ ԳԱՏԿԱՆԵԱՆ.

ԱՅՐԵՅԱՆԻ ԳՕՏԻՈՅ ԿԴՉԻՆԵՐՈՒՄԸ ԲՆԱԿՈՒՈՂ, ՄԱՐԳՈՒՄ ԳՍԲՄՆՈՅ ԿԱԶՄՈՒԱԾՔԸ (organisation)

(ՀԵՐԴԷՐԻՑ ')

Ոչինչ այնքան դժուար չէ՝ որքան Ովկիանոսի ծոցո մը գտնուած երկիրների գծագրութեան կենդանի և ճիշտ նկարագրութիւնը. որովհետեւ որքան էլ նորա մինը միւսից հեռացած լինէին, որքան էլ նորա (յնակիւնները) հեռու կամ փոքր տարածութեան վերայ գտնուած երկրից գտնուած փոսրանդութիւններով (émigration) մեծ բազմութեամբ եկած ժողովուած լինէին և որքան էլ առաւել հեռու կամ մօտաւոր շրջաններից այնու ամենայնիւ պատմութեան ցուցակում մը տաճորութեանը նորա ներկայացում են այնպիսի գոյների փոփոխութիւն (bigarrure), որը բոլորովն նուան է աշխարհացուցի մէջ գտնուած հայեցումաճքը ամնող գոյների փոփոխութեանը Սակայն այստեղ զարձեալ, զխաւոր գծագրութիւնները այնքան յետեալ չեն գտնուում այն վերաբերութեամբ՝ որ ՚րանց գէթ բնական մարմնոյ կազմութիւն կարողանային անուանել :

1. Ասիական կղզիներից մեծ մասումը մարդս պատահումէ մի տեսակ նեղորոտ ցեղին, որին իւրե երկրի ամենահին բնակիչներ լինելու իշխանութիւնը տուած են ') :

(1) Idées sur la philosophie de l'histoire de l'humanité. par Herder. — (ազգափարներ մարդուսեան փիլիսոփայութեան պատմութեան վերայ. Հերդերի) :

(2) Սարէնգէլի Փիլիսոփեան կղզիների պատմութիւն: Ճանապարհորդութիւն Ֆորսաէի բօրնէօի վերայ և Եւրիշ կղզիների մէջ, փորձեր (essai, օբիտէ), երկրի եւ ժողովուրդների վերայ, զիրք Բ, եր. 57: Ճանա-